

ՏԱՐՕՆՑԻՆ¹

Ահաւասիկ Յայը:

Ոչ միայն անպակաս ու անխառն, այլ՝ յորդագեղ:

Ահա հարազատ Յայաստանցին, որուն մօտենալով՝ կը զգաս, թէ կը մատչիս հայրենի լեռան մը:

Կարծես Քաջ Վարդանի թոռն է ան, Մեսրոպի աշակերտը եւ Սասունցի Դաւիթին աղբօր տղան:

Իր հոգիին ամէն կողմը բռունցք է՝ ուղղուած աշխարհի անիրաւութեան դէմ, եւ իր մարմնոյն ամէն կողմը սիրտ է՝ բաբախող հայ ազգէն եկող ապերախտութեան դէմ:

-Ազգի համար մեռանք, կորանք, ազգը մեզ մոռցաւ:

Ո՛չ: Տարօնցին անմոռանալի է, եթէ նոյնիսկ բոլոր մարդերուն ապերախտութիւնը ազգը ծախու առնէ ու թխմէ իր մէջ:

Եւ, սակայն, ո՞վ է սա «ազգ»ը: «Ազգ»ը Տարօնցին է նախ: Դժբախտաբար, մեր մէջ ազգը դրամն է: Աւելի ճիշդ, դրամի տեր եղողներն են, որ կազմած են ազգը:

Ազգը ոգի է նիւթ ըլլալէ առաջ: Ու Տարօնցիին շունչին մէջ կը զգաս այդ ոգիին ջերմութիւնը, բոյրը, շարժը:

Յայուն ազգային դիմագիծերը գտնելու համար պետք է մօտենալ Տարօնցիին:

Մանկութեանս Պոլսոյ մէջ առիթը ունեցած էի տեսնելու հազար տեղէ եկած Յայեր: Տղու բնազդս, սակայն, իրական Յայաստանցին կ'ընդունէր Տարօնցին:

Ինծի այնպէս կը թուէր, թէ այդ միամիտ, յամառ, քաղցր ու կտրիճ Տարօնցիին կուրծքին տակ կ'ապրի արծիւ մը, որ թշնամին է բոլոր օձերուն:

Մանկութենէս մինչեւ հիմա յուսախաբութեան չար քամին ինչե՛ր թափեց գիտակցութեանս առջեւ: Տարօնցին զիս յուսախաբ չըրաւ: Ընդհակառակն, որքան ճանչցայ զինքը, ան ավելի բարձրացաւ: Իր

¹ Տարօնցի կարծօրէն ըսելով՝ նկատի ունեցած ենք Տարօն-Տուրուբերանի եւ Սալնոյ Ձորի մեր ամբողջ հայրենակիցները: